# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի

## Ղեկավարի 2013թ-ի կիսամյակային

Ես՝ որպես Այգեշատ համայնքի ղեկավար, ներկայացնում եմ համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարմանը սահմանված կարգով կատարվում է հսկողություն:

Համայնքի հասարակական կարգի պահպանման համար սահմանվել է հսկողություն գիշերային ժամերին, որը իրականացվում է ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի միջոցով: Այս աշխատանքների շնորհիվ բավականին պակասել են անկարգություններն ու գողությունները: Աստիճանաբար հաստատվում է կարգապահությունը համայնքում :

Համայնքի փողոցների բոլոր խաչմերուկներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Նոր-տարին դիմավորելու համար զարդարվել է համայնքի հրապարակում գտնվող հուշարձանին հարակից եղևնիները:

Տարեսկզբին նոր-տարվա առիթով կազմակերպվեց Զմեռ պապու այցելությունը բնակիչների տները և 1-ից մինչև 6 տարեկան երեխաներին բաժանվեց նվերներ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի շնորհիվ փոտրվարի 13-ին Տյարն ընդառաջի տոնի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում համայնքի թվով 7 նորապսակների եկեղեցում կատարվեց ծիսակատարության կարգը այնուհետև արարողությունը շարունակվեց

համայնքի կենտրոնում արարողակարգի համաձայն, նորապսակներին բաժանվեցին նվերներ:

Գյուղապետարանի աջակցությամբ դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմը, ինչպես նաև համայնքից այլ բնակիչներ ապրիլի 24-ին այցելել և ծաղկեպսակ են դրել Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին:

Մայիսի 9-ին՝ հաղթանակի օրվա արթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ պարգևատրումներ է հանձնվել հայրենական պատերազմի վետերաններին:

Գյուղապետարանի միջոցներով կառուցվում է բուժկետ, որի շինարարական աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

Բավականին աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառում: 2013թ-ի գարնանային զորակոչի համար ավտոդպրոցում նախապատրաստվել և զորակոչվել են երեք զորակոչիկ, և մեկնել են զինծառայության: Հաշվետու ամիսներին համայնքում կատարվել է կենդանիների համաճարակային պատվաստումները հատկապես խոզի գրիպի դաբաղի և բրոցիլոզի դեմ: Կազմակերպվել և այժմ էլ կատարվում է աղբաթափություն ամիսը 4-անգամ շաբաթական 1-օր:

Կատարվել է համայնքի փողոցների լայնացման և մաքրման աշխատանքներ:

Աշխատանքներ են կատարվել Վաղարշապատի ՋՕՄ-ի հետ համայնքի Ուրց-Կոտայք Շամիրամ գոտուց օգտվող ջուր օգտագործողներին ժամանակին ջրով ապահովելու համար:

Այսքան կատարված աշխատանքների հետ մեկտեղ կան նաև որոշակի դժվարություններ, որոնք խոչնդոտում են գյուղատնտեսության զարգացմանը:Գյուղատնտեսական ապրանքների իրացման հարցում կան դժվարություններ հիմնականում արտահանման հարցում:

Առ. 30.06.2013թ-ի դրությամբ բյուջեն կատարվել է 99,1 -ով

| | |
|---|---|
| հողի հարկ ------6360,0 | կատարողական----6552,2 |
| գույքահարկ------1703,3 | կատարողական-----1513,3 |
| շինություն------ 403,3 | կատարողական-----158,1 |
| փոխադրամիջոց----- | կատարողական---1355,2 |
| վարձակալական հողերի վարձ-1300,0 | կատարողական---874,0 |

Այգեշատի գյուղապետարանի

առաջատար մասնագետ՝ Գայանե Մկրտչյան

Այգեշատ համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Հովսեփյան